

991

1957

ԼԵՒՈՆ ՍԵՒՐԵՅԻ

# ԱՖՈՐԻԶՄՆԵՐ

1(088)

U-23

НАХИЧЕВАНЬ н-Д.  
Графія С. Я. Авакова  
Գրան Ս. Աւագեանի

1916

1951  
"Հասկ" լր. Գրքարարության  
Մասնակ 196թ. Է. Բոբոյան

ԼԵՆԻՆ ՍԵՆՏՐՈՆ

1(088)  
U-23  
Ա

1(088)  
U-23

1001  
3689

# Ա Ֆ Ո Ր Ի Զ Մ Ն Ե Ր

20393-60

НАХИЧЕВАНЬ н Д.  
Типография С. Я. Авакова  
Տպարան Ս. Աւագեանի

2010

42001

Մարգս մի բարեկամ ունի, որ երբեք  
 նրանից երես չի դարձնում. այդ նրա խելքն  
 է: Մարգ չպէտք է այն թողած՝ ուրիշ բա-  
 րեկամներ որոնի, որ չլինի թէ և՛ նրան  
 կորցնի, և՛ ուրիշներ չգտնի:

Ինչ որ հնարաւոր է՝ իրականութիւնն  
 է տալիս մեզ, ինչ որ անհնարին է՝ — ցնորքը:

Բոլոր մարդիկ էլ զիտեն սակ ու  
 ճշմարիտ խօսել. տարբերութիւնը միայն  
 նրանումն է, որ մէկը ստելիս է իրեն լաւ  
 զգում, իսկ մյուսը՝ ճշմարիտն ստելիս:

Ճշմարտութիւնը նման է մի քմահաճ  
 գեղեցիկուհու, որ երբեմն մի տիտան է  
 արժանացնում իւր տեսութեան, երբեմն էլ  
 մի եղկելի:

Երբ մէկը ցանկանում է որ միւսը անկեղծ խօսի, այդ պահանջը ներքին յայտնի դրդապատճառի հետ ունի յաճախ նաև այն շարժապատճառը, որ ցանկացողը կամ ծոյլ է մտքից և կամ թէ թոյլ:

Ուժեղները թոյլերի մէջ զեռունների սողալն են միայն տեսնում, իսկ թափահարումն արծուի թևերի՝ ընաւ չեն լսում:

Սօսողը մի բան է ասում, լսողը մի ուրիշ բան է հասկանում. և եթէ ասածը չի բացադրում, մէկը զարմանում է, միւսն էլ դժգոհ է մնում. և կամ ընդհակառակն է տեղի ունենում: Այս գէպքում սառն անկեղծութիւնը պէտք է հանդէս գայ, որպէսզի թիւրիմացութիւնը մէջտեղից վերանայ:

Երբեմն թմկահարութեան մէջ է շահը, երբեմն լռակացութեան մէջ: Եւ այդ միջոցների անսխալ կիրառումը արտայայտում է մարդկանց ամբողջ խելացիութիւնը:

Թոյլը իւր մի թուլութեամբ ծածկում է իւր մի այլ թուլութիւնը և աւելի է թու-

լանում. ուժեղը իւր մի ոյժով պահպանում է իւր մի այլ ոյժը և աւելի է ուժեղանում:

Այն հոգին, որի վրայ ոյժն իւր թևերն է փռել, իսկոյն չի վրդովւում. իսկ երբ վրդովւում է, իսկոյն չի հանգստանում:

Ուրիշի մասին վատ մտածելու մէջ ձգտում կայ դէպի ոյժ և փախուստ սեփական թուլութիւնից:

Սէրը ծնունդ է գէմքերի տարերային ներդաշնակութեան: ✓

Բնութիւնից ստացւած հիացմունքը գմայլեցնում է. կնոջից ստացւած հիացմունքը արբեցնում է: ✓

Գեղեցիկ կնոջ մարմնի շքեղութիւնը, ձայնի քաղցրութիւնը, աչքերի մեղմութիւնը, խօսքի անզօրութիւնը այն ոյժերն են, որոնց հանդէպ հզօրն էլ, անզօրն էլ հաստարւում են: ✓

Գերագոր սյժերի առաջ բոլոր մարդիկ էլ հաւատար են. միայն չնչին պարագաներն են, որ ակներե են դարձնում նրանց միջև գոյութիւն ունեցող տարբերութիւնները: Արեգակի ճառագայթների տակ մեծ լապտերի լոյսն էլ, փոքր լապտերի լոյսն էլ սրպէս նսեմ կէտեր չէն երևում:

Օրիորդները խիղճ պէտք է ունենան՝ չհետաքրքրուելու ուրիշ երիտասարդներով, երբ իրենց երիտասարդների հետ են լինում. երիտասարդներն էլ խիլք պէտք է ունենան՝ չերեակայելու, թէ մինակ իրենք են հմայում իրենց սիրելիների սրտերը:

Եթէ իմ սիրելին մի փայտայտը խօսք ունի, առանց ամսասանքի թող այդ խօսքն ինձ ասի: Ինչպէս որ յաւիտենական ժամանակից ոչ մի վայրկեան չի կորչում, և անհատնում տարածութեան մէջ մի հիւլէ անգամ չի անհատանում, այնպէս էլ իմ հոգու մէջ քո խօսքն անանց կլինի:

Հազիւ թէ մարդ պահանջ զգայ ատելու, եթէ առիթ չունենայ. բայց հազիւ թէ

նա սիրիլ չուզենայ, եթէ նոյն իսկ առիթ էլ չունենայ:

Հազիւ թէ մարդ յոգնի սիրելուց. բայց ատելուց ամեն մարդ էլ յոգնում է:

Մարդ այն ժամանակ է ատում, երբ նրան խանգարում են սիրել:

Սրտից դուրս թատձ, կրկին սիրա մատձ սէրը նման է մի սիրուն թուջնի, որ թէև բնից բնուէր եղած, բայց միշտ պատրաստ է, որ այնտեղ թռնի:

Մարդ սկսում է սիրով դէպի այն տաննը, ինչ որ կհանք է տալիս նրան և վերջացնում է սիրով դէպի այն ամենը, ինչ որ կհանք է տուել նրան:

Երբեմն առջևից ենք ծաղրում մէկին, երբեմն յետևից, երբեմն էլ մէջտեղից, նա՛յած պարագաներին:

Երբեմն ճկում է մարդ, որ ասի «այժ», երբեմն էլ գալարում է, որ ասի «ոչ»:

Երբ դու մի հասարակ իրի մեծ գու-  
մար ես առաջարկում, վիրաւորում ես քեզ.  
Երբ մի թանգարժէք իրի փոքր գումար ես  
առաջարկում, վիրաւորում ես նրա տիրու-  
ջը: Արդ՝ լաւ զննիր իրը, որպէսզի ոչ գու-  
վիրաւորես, ոչ էլ նրա տէրը:

Սահմանափակ գլուխները, որ մեծ  
լինելու ցաւով են բռնւած, աւելի շուտ են  
իրենց մեծ հրեակայում, քան ուժեղ մըտ-  
քերը, որ նոյնպէս մեծ լինելու փափագ ու-  
նին: Սակայն դրանք էլ յաճախ մի փոքրիկ  
զիջում անելով՝ ձուլում են իրենց փայ-  
փայած մեծութեան հետ:

Եղկելի հոգիները, երբ ներում են մէ-  
կին, պարտաւորեցնում են նրան:

Մեծ մարդը, երբ բաց է անում իւր  
սիրտը, բաց է անում նրան՝ ամբողջապէս.  
Իսկ երբ ծածկում իւր իղձերը, այն ժամա-  
նակ ամուր փակում է նրանց դարբասները:

Բնութիւնը կեղծաւոր մարդկանց մի  
պատիժ է աւել—իրենց կեղծաւորութիւնը,  
և մի բարիք աւել—սէր ղէպի մարդիկ:

Կեղծիքի գերիները պատկառում են  
հզոր իրաւասէրից և ծաղրում են թոյլ իրա-  
ւասէրին: Երկու դէպքում էլ նրանք ան-  
կեղծ են, բայց և երկու դէպքում էլ հան-  
դէս են գալիս որպէս կեղծիքի գերիներ:

Երբեմն մի քաղցր խօսքի ես կարօտ,  
որ հոգուդ դառնութիւնից ազատես, բայց  
երբ այդ ցանկալի խօսքը չի հնչում, քո  
դառնութիւնը կարծես վրիժառու լինելու  
համար աւելի է դառնանում:

Ինչպէս որ մի ծածկոյթ ծածկում է  
մի խորշ և թոյլ չի տալիս, որ արեգակի  
ճառագայթները ներս թափանցեն, այնպիս  
էլ մեր ծանօթի մի խօսքը յաճախ ծածկում  
է նրա հոգու մի կողմը և անհնարին դար-  
ձնում նրա ըմբռնումը:

Մի մեծ առարկայ աւելի դժւար է  
թաղցնել, քան մի փոքրիկ առարկայ: Եւ  
եթէ մի մարդ կարող է ուզած ժամանակ  
իւր իսկական կերպարանքն անհրեւոյթա-  
ցնել, այդ ցոյց է տալիս, որ նրա էութիւնը  
փոքրիկ իրի պէս մի բան է:

Կամքը սահմանող սյժ է: Ով կամք ունի, նա միայն կարող է ասել. «այդ ես եմ»:

Երբ անհատի ազնիւ ըմբռնումներից կամաց-կամաց աճում է նրա բարոյական աշխարհը, կամքն է միայն, որ հնարաւոր է զարձնուձ այդ աշխարհի զարգացումն ու հաստատումը:

Ինչպէս որ կենդանութիւնը մարմնի ամբողջութեան պահպանիչն է, այնպէս էլ կամքը հոգու ամբողջութեան արտայայտիչը պէտք է լինի:

Մարդու հոգեկան բոլոր սյժերից կամքը միայն՝ յենւած բանականութեան վրայ արժանի է աստուածացման:

Մարդ առանց կամքի, մարդ թշուառ կեանքի:

Ամեն ինչ իրեն համար ժամանակ ունի. միայն ժամանակն իրեն համար ժամանակ չունի:

Յոյսը նման է մի գետակի, որ հոսում

է գաշտերի վրայով ու ձորերի միջով և կեանք է տալիս իւր անցած վայրերին. չորանում է գետակը, անապատ են դառնում և նրա անցած տեղերը:

Մերք գուքո վրայ ես յոյս գնում, ոչ միայն քիչ համար ես յոյսի աղբիւր գտնում, այլ և ուրիշների համար:

Մ կեանքի յաւերժութիւնը յոյսից է բըղխում, իսկ յոյսն աղբիւր մղումից է ձընւում:

Կեանքը յաճախ աւեղճւածի հետ համեմատելով՝ նրա էութիւնը մարդիկ աւելի են հեռացնում ըմբռնելու հնարաւորութիւնից:

Անազնիւ մարդու մտքին կեանքի իմաստը նոյնքան անմատչելի է, որքան որ բարիք գործելը խորթ է նրա հոգուն:

Ամեն մարդ էլ գիտակցում է իւր կեանքի աղքատութիւնը, այդ պատճառով էլ ստի կարիք է զգում: Եւ այդ կարիքի չափը ցոյց է տալիս, որքան մէկի կեանքն է աղքատ, որքան մի ուրիշինը:

Ճշմարտութիւնը միացնող սյժ է, սու-  
աը—բաժանող:

Ճշմարտութիւնը սիրել ուզենալ, նշա-  
նակում է կեանքի յաւերժական էութիւնը  
ընդգրկել ուզենալ:

Ով կրակ է պցում՝ որ իւր տունն այ-  
րի, չի գնայ ուրիշի տան հրդեհը հանգցնի:

✓ Ով հաւատ ունի դէպի իւր անձը, նա  
բաց չի թողնի իւր ձեռքի սանձը:

Դու թանգ գնահատիր մի ազնիւ մար-  
դու լոկ բարեր, քան անազնի պատիւն ու  
հիւրասիրութիւնը, ապահով հղիր, երբ նե-  
ղըն ընկնես, սառձիկը չի դլանա: քիզ իւր  
ձեռքը մեկնել, իսկ վերջինը կըշտապի՝ որ  
երեսդ չահանի:

Մարդ պէտք է մի վեհ բան իւր մէջ  
ունենայ, մէկն էլ իրենից դուրս: Անհատի  
սեփական վեհութիւնն անհրաժեշտ է, որ  
նա աշխարհի հանդէպ անարժան չլինի, աշ-  
խարհն էլ պէտք է մի վեհութիւն ունե-

նայ, որպէսզի անհատի հանդէպ անարժան  
չդառնայ:

Իմաստունները ձգտում են իմաստու-  
թեան մէջ կատարեալ լինել, անմիտներն  
էլ՝ անմտութեան մէջ. իսկ թէ դրանցից թիվ  
է իւր ճիւղի մէջ աւելի կատարեալ,—դժ-  
ւար է ասել:

Որքան որ սպամի դաշտում տղամար-  
դու քաջութիւնն է անհրաժեշտ, նոյնքան  
էլ խաղաղ կեանքում անհրաժեշտ է նրա  
ուղղամտութիւնը:

Աւելի լաւ է սէր ունենալ դէպի մի  
մարդ, քան անտարբեր լինել դէպի նա. բայց  
աւելի լաւ է անտարբեր լինել դէպի մէկը,  
քան ատել նրան, սակայն աւելի լաւ է ա-  
տել մէկին, քան շողոքորթիլ նրան:

Մարդու սէրը դէպի իւր անձը նրա  
համար միայն միջոց է՝ ուրիշներին սիրել  
կարողանալու:

Հարստութիւնը ուրախացնում է, դա-  
զափարները ոգևորում են:



Սաղաղ ժամանակ ճահճի ջուրն էլ պարզուում է, փոթորկի ժամանակ գետակի ջուրն էլ պղտորուում է:

Ամեն ինչ կարելի է վաճառքի հանել և ծախելուց յետոյ էլ չի կորցնի իւր արժէքը. միայն առաքինութիւնը ծախելուց յետոյ կորցնում է իւր հմայքը:

Հազիւ թէ գտնւի մի մարդ, որ իւր առաքինութիւնը ծախել չուզենայ, և հազիւ թէ գտնւի մի ուրիշը, որ օտարի առաքինութիւնը գնել ուզենայ:

Իրականութեան ու ցնորքի միջև գրտուող հեռաւորութիւնն այնքան էլ մեծ չի լինի, եթէ մարդ այն չմեծացնի:

Անօրեայ կեանքում մարդ պէտք է սովորի չափսոսալ. ամեն մի չնչին բանի կորուսման պատճառով ավսոսալուց մարդ այնքան է թուլանում, որ վերջ ի վերջոյ ինքն է դառնում ավսոսանքի առարկայ:

Երկար բարակ ավսոսալու ոգորմի-

լի յատկութիւնը թուլացնում է տղամարդու մէջ նրա հոգու արիւթիւնը:

Ամեն տեղ սեփական օգուտ փնտրելով՝ մարդ այնքան է փոքրանում, որ իւր մեծութիւնը ստացած շահի փոքրութիւնից չի տարբերուում:

Մարդկանց չպէտք է պատմես քո այն ունակութիւնների մասին, որ նրանք չեն տեսնում. իսկ այն կարողութիւններդ, որ նրանց համար էլ պարզ են, կարիք չունիս պատմելու: Սակայն միշտ այսպէս լինելն էլ ձանձրալի է...

Երբեմն տխրում ես, երբ պատահում ես քեզից անձար մարդու. երբեմն էլ տըլրում ես, երբ պատահում ես քեզից կարող մարդու:

Երբ մէկը խօսում է ձեականութեան համար, ծիծաղում է ձեականութեան համար, ախրում է ձեականութեան համար, չէ՞ նշանակում արդեօք, որ այդպիսին ապրում է նաև ձեականութեան համար:

Մարդիկ իրարից շատ էլ դժգոհ չեն լինի, եթէ յաճախ չմոտանան, որ իրարից շատ էլ չեն տարրերում:

Նրանք՝ սրունք իրանց միծամտութիւ-  
քը կրում են իրենց դէմքի վրայ, նման են  
այն հարուստ վաճառականներին, որ տեղ  
չունին իրենց ապրանքը տեղաւորելու:

Այն օրից սկսած, երբ ուրիշի կարծի-  
քը քեզ այլևս չի անհանգստացնում, այն  
օրից սկսած քո նաւը իւր խարխիւխի վրայ  
է հանգստանում:

Այն ըտպէին, երբ մենք ուրիշների  
վրայ մի ծիծաղելի բան ենք նկատում, գու-  
ցէ չէնց նոյն ըտպէին մենք ինքներս էլ մի  
բանում ծիծաղելի ենք:

Մի ազեղ կնոջ շղարած դէմքը տես-  
նելիս՝ ոչ ոք չի վրդովուում. բայց լպիրշ  
մարդու բերանից առաքինի խօսքեր լսե-  
լիս՝ վրդովուում է մարդ:

Տիեզերքի անասնամանութիւնն արձա-

գանդւած է մարդկային բնութեան անհ-  
զըութեան մէջ:

Ամբոխականութիւնն ու հանձարեղու-  
թիւնն իրար դէմ մշտնջենաւոր պայքար են  
մղում. առաջինը ձգտում է տեսանելին  
կուռք դարձնել, իսկ վերջինը ձիգ է թա-  
փում անտեսանելին գերազոյն սկզբունքի  
բարձրացնել:

Հանձարեղ մարդը սովորական մար-  
դուց թէ աւելի մօտ է բնութեան տարի-  
քին և թէ աւելի հեռու է նրանցից, մօտ է՝  
կեղծիքից ու ձեւականութիւններից զերծ  
լինելով և հեռու՝ իւր անպատահական հա-  
մոզումներով:

Երկու ազգերի հանձարեղ անհատներն  
աւելի մօտ են իրար, քան նոյն ազգերի  
միւս մահկանացուները:

Բնութեան արհաւիրքները երկրին նոր  
ձևեր են տալիս, հանձարները մարդու-  
թեան նոր ոգի են ներշնչում:

Ողորմելի ցեղերը հայրենիքի մարտերով զոհ եղան:  


100  
 200  
 300  
 400  
 500

Հանձարեղութիւնը մի ազգութեան սրբութիւն սրբոցն է:

Հանձարեղութիւնը այն անցազիրն է, որ պահանջում է ժամանակն ազգերից, երբ սրանք մի հազարամիակից ոտք են դնում միւս հազարամիակի մէջ:

Բռնակալները իրենց իշխանութիւնը մարդկանց վրայ տարածելիս՝ նրանց իրենց կամքի ստրուկների տեղ են ընդունում. ոգու հերոսները, երբ հաղորդում են մարդկանց իրենց մտքի զօրութիւնը, ուզում են՝ որ նրանցից իւրաքանչիւրը առգորւի իրենց էութեան ոյժերով:

Գ Բռնականութեան ձայնը թող ազատ հնչւի, կրքերի շարժումը թող գաղտնի կատարւի:

Ուղղիր հայեացքդ յաւերժութեան և ունկնդիր հղիւր նրա անշեղ օրէնքների բարբառին:

Սիրիր յաւերժութիւնը, որ քեզ արած ժամանակն ապարդիւն չանցկացնես:

Սիրիր յաւերժութիւնը, որ աշխուհի ցաւերից ազատւես և վիրաւոր հոգիդ նրա անդորրութեան մէջ ապաքինես:

Սիրիր յաւերժութիւնը, որ արեգակի ծագելու և մայր մանկու պէս զեղեցիկ լինի քս յայտնելն ու անհետանալը:

Բռնականութիւն, ով քեզ չի սիրում, յաւերժութեան ձայնը նրան չի հասնում:

«Կասկած» բառը գոյացել է «կանց, կանց» խօսքից, որով մեր նախնիք իրենց ճնշող մտածմունքին ուղեցիկ են ասել. «սպասիր, սպասիր, մի մտիւր մեր սիրտը»: Բայց այժմ, երբ կասկածը պատում է մեր հոգին, մենք չպէտք է կրկնենք. «սպասիր, սպասիր, մի մտիւր մեր սիրտը»:

Գ Երբ մարդիկ միասին զժրախտանում են, պէտք է աշխատեն միասին էլ բախտաւոր դառնալ:

Բարի մարդը միտքն վրդոված ժամանակ կարող է վատութիւն անել. իսկ

չար մարդը իր խաղաղ ժամանակն էլ, վեր-  
դառնա՞ծ ժամանակն էլ նւիրում է վատա-  
գործութեան:

Ամեն մի ազնիւ ձգտում անարատ է  
մինչև այն ժամանակ, քանի դեռ հոգու և  
մտածողութեան սահմաններից դուրս չի  
հիկիւ: Բայց հէնց որ մարդ փորձում է այն  
իրազործել, նա արատաւորում է (ըստ  
երևոյթիւն և բնու ըստ էութեան) կատա-  
րած անխուսափելի չարիքներով: Սակայն  
ինչպէս որ արեգակի վրայ դանւոյ բծերը  
չեն նսեմացնում նրա փայլը, այնպէս էլ  
ստեղծւած մեծ բարիքը չպէտք է նսե-  
մացնել գործւած վորք չարիքների սուե-  
րով:

Ձ Սոսկումի մի երկիւղ է պատում իմ  
հոգին, երբ մտածում եմ, որ տիեզերքն  
անսահման է, սակայն այդ երկիւղը զար-  
ձեալ համակում է ինձ, երբ մտածում եմ,  
որ տիեզերքը կարող է սահմաններ ունե-  
նալ:

Մարդու սէրը զէպի աշխարհն ու տի-

եզերքը՝ արտացոլումն է զէպի հարազատ  
ու մօտիկ վայրերն ունեցած սիրոյ:

Կայան ունի միայն հոգին. մարմնի  
կայանը երկրագունդն է ողջ:

Տղամարդն աւելի ենթակայ է կենսա-  
բոնաձիգ ոյժին, կինն աւելի ենթակայ է  
կենդրոնախոյս ոյժին:

Վ. Երբ քո սրէն թուլութեան գիտակ-  
ցութիւնից շատ կը վշտանաս, վերջիշիւր ա-  
ռուելութիւններդ և նրանցով սխափիր քեզ:

Թոյլ մարդը իւր կեանքի երջանիկ  
բողէններում էլ հանգստօրէն չի վայելում  
իւր երջանկութիւնը, նրա թուլութեան շնոր-  
հիւ առաջանում են միշտ այնպիսի խնդիր-  
ներ, որոնց վերջիշումը սոսկ դառնա-  
ցնում է նրա սիրտը:

— Ծիածանի պէս կարճատև է իմ եր-  
ջանկութիւնը և մուլթ գիշերի նման երկար  
է իմ վիշաք.—ասում է մէկը:

— Իմ հոգուն հանգիստ է հարկաւոր:

ինչպէս որ հիւանդին դարձան: Հիւանդն ատանց դարմանի մնալով՝ մեռնում է ու հանգստանում. իսկ իմ հոգին առանց հանգստի ինձ համար գահիճ է դառնում.— աւերացնում է միւսը:

— Ես ուզում եմ բոլոր մարդկանց հաւատալ և շատերին սիրել. բայց իմ սիրոյ և հաւատի համար ես դառնացնում եմ իմ կեանքն և թունաւորում իմ հոգին թերահաւատութեան ու ատելութեան թոյնով.— շարունակում է հազար ու մէկերորդը:

— Դուք թոյլ էք ու հիւանդ.— պատասխանում է նրանց արտունջների ունկնդիրը:

— ... Թոյլ էք ու հիւանդ.— արձագանգում է ստեղծող ու աւերող բնութիւնը:

— Մէկն՝ անկողի փոքր սխալներ՝ ընկնում է մեծ մտածմունքի մէջ, միւսն՝ անկողի մեծ սխալներ՝ ընկնում է փոքր մտածմունքի մէջ:

Բոցը սմանց մէջ վերածւում է հրդեհի, իսկ ուրիշների մէջ՝ հրդեհը— բոցի:

— Այն մարդը, որ ոչ բարիք գործելու ցանկութիւն ունի, ոչ էլ չարիքի է ընդունակ, նման է այն բոյսին, որ ոչ համեղ է, ոչ էլ փշոտ:

Բոլոր լիզուների համար մարդ ահանջ ունի, բայց բոլոր լիզուների համար հասկացողութիւն չունի:

Ձիու հասարակութիւնը հաճելի չէ իշին, իշինն էլ՝ ձիուն. վասն զի էշը չունի մի այնպիսի բան,\* որով սքանչացնի ձիուն, ձիու հմայքն էլ անմատչելի է իշի ըմբռնողութեան:

— Քո սրտի իզձը անիրազորձ կրմնայ, հիթէ մանր ցանկութիւններից քանակը մեծանայ:

Գաղափարը պէտք է երկաթ շաշեցնի, որպէս զի լուսութեան մէջ լսելի լինի:

Մարդկանց բարքերը կաղնւանան և և նրանց մեծամասնութեան միջից կը վերանայ աստուածային սկզբունքի անհետա-

ցումը (որը ստեղծելու մէջ է հայանում),  
եթէ մարդիկ իրենք կռեն ու կտինն իրենց  
ճակատագիրը:

Ուղենալ, որ բոլոր մարդիկ «արգա-  
րամիտ» լինին, միևնոյն է թէ ուղենալ,  
որ բոլոր քամիները մի ուղղութեամբ փչեն:

Արդարամտութիւնը նոյնքան անմատ-  
չելի է մարդ արարածի համար, որքան որ  
լիռան գազաթը լիռան ստորոտում կանդ-  
նած կաղի համար:

Ո՞ւր տանի և ո՞ր բարի տակ թաղի  
մարդ իւր կենդանի բնութիւնը, որպէսզի  
իւր գուռը բաց անի և ներս թողնի կեան-  
քի հեղեղից դուրս կանգնողներին յորինած  
արդարամտութիւնը...

Ամեն մի մասձող մարդու համար աշ-  
խարհիս երեսին բացի իւր կեանքից կայ և  
մի այլ թանգագին բան—իւր ազգի կեան-  
քը, անհատի կեանքը առանց ազգային կեան-  
քի նման է ծառից պոկւած տերևի կեան-  
քին:

Մի ժողովուրդ առանց հինաւուրց  
հայրենիքի, միևնոյնն է ինչ որ մի տուն ա-  
ռանց հաստատուն հիմքի:

Այն հողը, որի վրայ քո նախնիքն են  
ապրել, քեզ համար պէտք է սուրբ լինի,  
որովհետև այդ հողի վրայ թափւել է նրանց  
արիւնը յանուն քո գոյութեան:

Այն բանը, որ քո նախնիք ներսաբար  
դահել են քեզ համար, դու չպէտք է ապի-  
կարութեամբ դէն ձգես, որպէսզի քեզ հա-  
մար էլ չաուի. «մի արկանէք մարդարիտս  
առաջի խողաց»:

Ասուած այնտեղ է շրջում, ուր մեզք  
չի գործւում. անապատներում և անմատ-  
չելի լեռների գազաթների վրայ է սաւառ-  
նում տատուածային ոգին: Եւ թշուա մարդ-  
կութիւնը դժւարին ըոպէնիւրում օգնու-  
թեան է կանչում իւր Աստուծոյ, որ իրե-  
նից հետու է ապրում: Եւ գալիս է աստ-  
ւածային ոգին՝ իւր հետ բերելով անապա-  
տային արեգակի ջերմութիւնը և բարձրա-

բերձ լիոների յատակ սառնութիւնը: Նրա ներկայութիւնից թեթևութիւն է զգում մեղաւոր մարդկութիւնը և միևնոյն ժամանակ ոյժ է սառնում նորից մեղքեր գործելու:

Իմաստութիւնն այն կայանն է, դէպի ուր փախուստ է տալիս մարդ արարածը, երբ անկարող է իւր բնութեան տարիւրքի ձայնին հետևել:

Երբ օտարի բուժ անարգարութիւնը խորապէս վշտացնում է քեզ և դու անզօր ես վրիժառու լինելու, ի՞նչ է մնում քեզ տանել, եթէ ոչ մրմնջալ. «Հայր, ների՛ր նրանց»...

Մարդկութեան բախտը հէնց նրանումն է, որ ազգերն ու անհատները ոչ միայն յարգում ու սիրում են իրար, այլև թշնամանք ու խորթութիւն են զգում իրար վերաբերմամբ: Եթէ այդպէս չլինէր, ազգեր գոյութիւն չէին ունենայ. առաջ կըզար մարդկային համատարած մի խառնուրդ և այդ շփոթն այն հետևանքը կ'ունենար, որ

մարդիկ կըկորցնէին պայքարելու և ստեղծելու տենչը, հետևապէս և ապրելու հաճոյքը:

Կեանքը, որ արևից է գալիս, չպէտք է խաւարի միջով անցնի. արևի որդիները պէտք է արևի որդիների նմանեն:

Աւելի լաւ է մի բարեկամ ունենալ և և հազար թշնամի, քան առանց բարեկամի մնալ, բայց և թշնամիներ չունենալ:

Մարդս բացի երկնքի թռչունից և ոչ մի արարածի չպէտք է երանի տայ:

Բնութիւնը մի մարդու տալիս է բնաւորութեան այնպիսի երանգներ, որոնցից զուրկ է մնացած ամբողջ մարդկութիւնը: Եւ եթէ ամեն մարդ էլ հետամուտ լինի իրեն միայն տրւած երանգներից գեղեցիկները զարգացնել, այն ժամանակ թէ մարդկային հասարակութեան ներքին էութիւնն աւելի բազմապիսի կըլինի և թէ մարդկանց փոխադարձ հետաքրքրումը:

ՀՀ Ազգային գրադարան



NL0025156

0025156



991

20783





---

ԳԻՆՆ Է 30 ԿՈՊ.

---

Դրժեւ հեղինակին՝

Ростовъ н-Д. Казанск. пер. 75.

1864